

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Երեքշաբթի, Յուլիս 13ի առաւօեան ժամը 10:00ին, Առաջնորդ Սրբազան Հօր նախագահութեամբ եւ ատենապետութեամբ՝ Արժ. Տ. Արշակ Աւագ Քինյ. Խաչատուրեանի, Առաջնորդարանի մէջ գումարուեցաւ Թեմիս Հոգեւորականաց Վարչական հերթական ժողովը:

Առաջնորդ Սրբազան Հայրը բարի գալուստ մաղթեց հոգեւորականներուն, ապա ներկայացուց իր ընդհանուր գեկոյցը, որուն մէջ անդրադարձաւ Հոգեւոր Հովիւներուն դրկած իր Հովուական Նամակին եւ յայտնեց, թէ աւելի մանրամասնութեամբ եւ տարբեր բովանդակութեամբ երկրորդ Հովուական Նամակ մըն ալ պիտի դրկուի մօտ ապագային:

Օրակարգի նիւթ էր նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սեպտեմբեր 10-12, 2010 Արեւմտեան Թեմ կատարելիք այցելութիւնը եւ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Օծման Արարողութիւնը, ինչպէս նաեւ յարակից հանդիսութիւնները:

Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան, որ Սրբազան Հօր կողմէ պարտականութիւն ստանձնած էր Սուրբ Մկրտութեան, Սուրբ Պսակի եւ Թաղման Կարգի նոր արարողակարգեր պատրաստելու, ներկայացուց իր կատարած աշխատանքը, որ շուտով իր վերջնական ձեւը պիտի գտնէ եւ յանձնուի տպագրութեան: Հայր Սուրբը պատրաստած էր նաեւ յատուկ Արարողակարգեր՝ Հայրապետական Մաղթանքի, Զրօրհնէքի, Տնօրհնէքի, եւ այլն:

Նկատի առնուեցան նաեւ Առաջնորդարանի գլխաւոր ծրագիրները եւ Թեմս յուզող զանազան հարցեր: